

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/12»**

ք. Երևան

«29» 09 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գազկոմշին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 180 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում .

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծմանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան տեղեկված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն.

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 210 008 239,49 (երկու հարյուր տաս միլիոն ութ հազար երկու հարյուր երեսունինը ամբողջ քառասունինը) ՀՀ դրամ, որից 35 001 373,25 (երեսունհինգ միլիոն հազար երեք հարյուր յոթանասուներեք ամբողջ քսանհինգ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև 25%-ի չափով, Պատվիրատուն կարող է փոխանցել է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի, ինչպես նաև կանխավճարի չափով ծախսերի բաշխման և դրա շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամանակացույցի վերաբերյալ պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքի ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ), բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 4, N4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3


ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատանքների գործառնական վարչություն
02565827



Ա. Մկրտչյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«Գազկոմշին» ՍՊԸ
ք. Երևան, Օրբելի 65ա, բն. 47
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 11500905218000
ՀՎՀՀ 00843968



Մ. Միսակյան

Կ.Տ

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Կոտայքի մարզի Ջարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների կատարման

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքները	Աշխատանքների կատարման ժամկետը**
1	Հողային աշխատանքներ	ոչ ուշ քան 10-րդ օրացուցային օրը
2	Հիմքերի կառուցում	ոչ ուշ քան 10-րդ օրացուցային օրը
3	Երկաթբետոնե շրջանակ	ոչ ուշ քան 20-րդ օրացուցային օրը
4	Ծածկի կառուցում	ոչ ուշ քան 20-րդ օրացուցային օրը
5	Տանիքի կառուցում	ոչ ուշ քան 40-րդ օրացուցային օրը
6	Հատակների կառուցում	ոչ ուշ քան 40-րդ օրացուցային օրը
7	Բացվածքներ	ոչ ուշ քան 50-րդ օրացուցային օրը
8	Հարդարման աշխատանքներ	ոչ ուշ քան 100-րդ օրացուցային օրը
9	Դեղատուն, հովհար	ոչ ուշ քան 100-րդ օրացուցային օրը
10	Միջնորմների կառուցում	ոչ ուշ քան 100-րդ օրացուցային օրը
11	Թեքահարթակներ, Աստիճաններ	ոչ ուշ քան 100-րդ օրացուցային օրը
12	Բժշկական վերելակ, շինարարական աշխատանքներ	ոչ ուշ քան 120-րդ օրացուցային օրը
13	Բացվածքների ամրացում և հարդարման աշխատանքներ	ոչ ուշ քան 120-րդ օրացուցային օրը
14	Սալվածք, հովհար	ոչ ուշ քան 130-րդ օրացուցային օրը
15	Ինժեներական աշխատանքներ /ջուր, կոյուղի/	ոչ ուշ քան 140-րդ օրացուցային օրը
16	Ինժեներական աշխատանքներ /օդափոխություն և ջեռուցում/	ոչ ուշ քան 140-րդ օրացուցային օրը
17	Ինժեներական աշխատանքներ /էլեկտրամատակարարում/	ոչ ուշ քան 150-րդ օրացուցային օրը
18	Ինժեներական աշխատանքներ /հակահրդեհային համակարգ/	ոչ ուշ քան 150-րդ օրացուցային օրը

19	Արտաքին ինժեներական աշխատանքներ	ոչ ուշ քան 170-րդ օրացուցային օրը
20	Տարածքի բարեկարգում	ոչ ուշ քան 180-րդ օրացուցային օրը
	Ընդամենը	180 օրացուցային օր

* Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությանն առնչվող բոլոր փոփոխությունները անհրաժեշտ է նախօրոք համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

**Աշխատանքների կատարման ժամկետը հաշվարկվում է ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև կնքվող (պայմանագիրն) համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից՝ տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման համապատասխան պայմանագրերի առկայության դեպքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

«Արտաքին աշխատանքների կոմիտե»
 ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
 կառավարական տուն 3

«Ֆինանսների նախարարության
 աշխատակազմի գործառնականության

ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուզ

[Handwritten signature]
 (ստորագրվել է)
 02565827




ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«Գազկոմշին» ՍՊԸ
 ք. Երևան, Օրբելի 65ա. քն. 47

«Հայրիզնեսրանկ» ՓԲԸ
 ՀՀ 11500905218000

ՀՎՀՀ 00843968

Տնօրեն՝



Մ. Միսակյան

[Handwritten signature]

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

		Կատարված աշխատանքների						
N	անվանումը	տեխնիկական ընդլայնագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամկացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն

Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջներ

Աղյուսակ N1

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքներ

Հ/Հ	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված նյութեր և սարքավորումներ	Նախագծողի կողմից սահմանված երաշխիքային ժամկետ /տարի/
	Հարդարման աշխատանքներ	
1	Բազալտե հանքաքամքակից ջերմամեկուսիչ նյութեր	50
	Բարեկարգման աշխատանքներ	
2	Ասֆալտբետոնե ծածկույթի շահագործման երաշխիքային ժամկետ	3
	Էլեկտրալուսավորում	
3	Առաստաղային կախովի լուսատուի տեղադրում 595 x 595 մմ չափի 32 Վտ 3200 լմ	1
4	Առաստաղային կախովի լուսատուի տեղադրում 595 x 595 մմ չափի 18 Վտ 1800 լմ	1
5	Առաստաղային կախովի լուսատուի տեղադրում 595 x 595 մմ չափի 32 Վտ 3200 լմ վթարային սնուցման մարտկոցով	1
6	Պատի լուսատուի տեղադրում լուսադիողային լամպով 2*9 Վտ	1
7	Առաստաղային լուսատուի տեղադրում, ներկառուցվող լուսադիողային 1290*90 18Վտ 1800լմ	1
8	Լուսատուի տեղադրում LED 60 Վտ մետաղյա կորպուս 6800 լմ 5000 Կ IP65	1

Աղյուսակ N2


ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքներ

Հ/Հ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել, տեխնիկական բնութագիր	Չափ. միավ	Քանակ	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորման գործարանային երաշխիքային ժամկետ տրված արտադրողի կամ մատակարար-ներկայացուցչի կողմից /տարի//
1	2	3	4	5
	Վերելակ			
4	Delfar China Arlift Armenia Լիֆտ 3 կանգառ մեքենայական մասով բժշկական ,ավտոմատ դռներով 1 մ / վրկ բեռնունակությունը 1600 կգ , չժանգոտող պողպատից տեղադրումով և կարգաբերումով	կ-տ	1	1

Օդափոխության սարքավորումներ				
5	DANTEX RM-45BHG2NM, Ներածման համակարգ էլ. տեղով տաքացում 380 Վ- 12 կվտ	կ-տ	1	1
9	ZILON ZFO 300p ZILON, ,օդափոխիչ N=3.0 կտ 1435 պտ /րոպե	կ-տ	1	6 ամիս
Ջեռուցման սարքավորումներ				
10	UNIKAL-50 Գազի կաթսա - 50 կվտ /փակ այրման խցով պատի կախով/համալրված ծխատարով և մոնտաժային կոմպլեկտով	կ-տ	1	1
Հրդեհի ահագանգման համակարգ				
11	ИСБ Рубеж, Рубеж-20П Հրդեհային ազդանշանային ընդունիչ-հսկիչ սարք ընդարձակիչով 4 գոտու համար , 10-28 В	հատ	1	1
12	ИСБ Рубеж, Рубеж-БИ . Ներքին ազդարարիչ սարք /շչակ/ 10-28 В 200*160*50մմ	հատ	2	1
13	ИСБ Рубеж ОПОП 124-7 ,Արտաքին ազդարարիչ սարք /շչակ/լուսածայն Светозвуковой 100дБ, У-пит.12В	հատ	1	1
14	Аргус-Спектор, ИВЭПР 12v3a Անընդհատ սնուցման բլոկ 12v3a	հատ	1	6 ամիս
15	ИСБ Рубеж, ИПП 533-22 Բոցի ավտոմատ ազդասարք 12Վ	հատ	2	1
16	БОЛИД дип 34 А Ծխային ավտոմատ ազդասարք	հատ	41	1
17	БОЛИД ИПР Ձեռքով գործարկման ազդասարք	հատ	7	1
Արևային ՖՎ կայան				
18	SOLARON SMM -330, Արևային ֆոտովոլտային վահանակ, մոնոբյուրեղային, ափսեային հզորություն (նվազագույն) 330Վտ, գործարանային երաշխիք նվազագույն 25 տարի, հզորության անկում 20%	հատ	60	10
19	EKF, УЗИП, ОПВ-D/2P Iո, Փոփոխական հոսանքի գերլարումների սամանափակիչ, 2-րդ դաս, եռաբևեռ, 5kA 230В с сигн.EKF PROxima	հատ	1	5
20	ЭЛЕКТРО ОМ, ЭЛ2 380/5, Դարձափորձային եռաֆազ հաշվիչ 20կՎտ, 380Վ 5Ա	հատ	1	1
21	GROWATT MAX 20KTL3LV, Ինվերտոր 20կՎտ ցանցային, եռաֆազ մուտքային հզորությունը նվազագույնը 23կՎտ	հատ	1	1


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն



ԿԱՊԱՍԱՌՈՒ՝

«Գազկոմշին» ՍՊԸ
ք. Երևան, Օրբելի 65ա, բն. 47
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ
ՀՀ 11500905218000
ՀՀ 00843968



Միսակյան

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱԿԱՇԻՎ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքներ

Գ/Գ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	միավորի արժեքը	ընդամենը
1	2	3	4	5	6
	Կցակառուցի, ծածկարանների և թեքահարթակների կառուցման համաշինարարական աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ				
1	Մեկ հարկանի քարե շինություն 1000մ ^ա	մ ³	45	3000.00	135000.00
2	Երկու հարկանի քարե շինություն 5000մ ^ա	մ ³	4420	1600.00	7072000.00
3	Շին աղբի քարծուս 0.5լսմ մեխանիզմով ինքնաթափիմ	մ ³	1326 0	1500.00	1989000.00
4	Տեղափոխում 5 կմ	տն	2254.2	1000.00	2254200.00
	Ընդամենը՝ Քանդման աշխատանքներ				11450200.00
	Հողային աշխատանքներ				
1	3-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով կողլցում շերտի 0,5մ ա ծավալով	1000մ ³	0.0970	600000.00	58200.00
2	4-րդ կարգի բնահողի մշակում մեխանիզմով կողլցում շերտի 0,5մ ա ծավալով	1000մ ³	0.0975	650000.00	63375.00
3	Բնահողի մշակում ձեռքով 3-րդ կարգի	մ ³	9.8	3500.00	34300.00
4	Բնահողի հետիցք հատակների տակ մեխանիզմով	1000մ ³	0.0984	500000.00	49200.00
5	Բնահողի հետիցք մեխանիզմով	1000մ ³	0.0961	500000.00	48050.00
6	Նույնը ձեռքով	մ ³	2.9	2000.00	5800.00
7	Բետոնե հիմքերի քանդում	մ ³	12	2000.00	24000.00
8	Շին աղբի հավաքում, տեղափոխում և քարծուս ինքնաթափիմ	տն	22.8	2000.00	45600.00
9	Տեղափոխում 5 կմ	տն	22.8	1500.00	34200.00
	Ընդամենը՝ Հողային աշխատանքներ				362725.00
	Կոնստրուկցիաներ				
	Հիմքեր				
1	Բուտաբետոնե հիմքերի կառուցում 4-7,5	մ ³	18.5	35000.00	647500.00
2	Միաձույլ բետոնե հիմքեր 4 - 12.5 բետոնից A1	մ ³	15.50	50000.00	775000.00
3	Հիմքերի ուղղահայաց հիդրոմեկուսացում քիտումի մածիկով	100մԱ	0.865	250000.00	216250.00
4	Մետաղական ցանցի տեղադրում (առանց նյութի արժեքի)	տն	0.1235	400000 00	49400.00
5	Մետաղական ցանց (ռաբիցա)	մ ²	140.3	3000.00	420900.00
6	Հիմքերի արտաքին մասերի սվաղում ց/ավազե շաղախով, ռաբիցա ցանցի վրա	100մԱ	1 403	75000.00	105225.00
7	Հիմքերի ջերմամեկուսացում արտաքինից 100մմ հաստ. երկշերտ բազալտե մամրաթելային սալերից. վերին շերտ 30 - մմ - 80 /կգ/մ ³ խտութ., ստորին շերտ - 70 մմ - 37կգ/մ ^ա խտութ. : C-100 մածիկով /10 սմ հաստ. խցարութակներով ամրացնելով V=270,5*0,10=27,05մ ³	մ ³	14.00	200000 00	2800000.00
8	Ամրանավորված հորիզոնական հիդրոմեկուսացում ց/շաղախով	մ ²	60.5	5000.00	302500.00
9	Պատերի կառուցում 20 սմ հաստ. պեմզաբլոկից /արտաքին/	մ ³	30.20	16000.00	483200.00
10	պեմզաբլոկի անցքերի լիցք թեթև բետոն Բ - 7.5	մ ³	6.10	35000.00	213500.00
11	Պատերի ամրանավորում Ա-1	տն	0.320	400000.00	128000.00
12	հարիսխի տեղադրում Ա-500C -12մմ	տն	0 0767	400000.00	30692.00
	Շ-1 - 2 հատ				
1	Բնահողի տոփանում խճով 20-40 մմ	100մ ²	0.2065	45000.00	9292.50
2	խճի մախաշերտի կառուցում 100մմ 20-40 մմ	մ ³	2.065	8400.00	17346.00
3	Բետոնե մախաշերտ 4 - 7.5 բետոնից 100 մմ	մ ³	2.065	35000.00	72275.00
4	Միաձույլ ե/բ հիմնային հեծանների կառուցում Բ-25 բետոնից	մ ³	8.05	70000.00	563500.00
5	Ամրան Ա-1/Ռուսաստան/	տն	0.4607	300000 00	138210.00
6	Ամրան Ա-500c -22 մմ	տն	0.71991	300000.00	215973.00
7	Թեթևավոր պողպատ	տն	0.00866	600000 00	5196.00
8	Ամրան Ա-500c -14մմ	տն	0.02368	300000.00	7104.00
9	Ամրան Ա-500c -16մմ	տն	0.13988	300000.00	41964.00
10	Միաձույլ ե/բ հեծանների կառուցում Բ -25 բետոնից	մ ³	5.91	70000.00	413700.00

Գ/Գ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	միավորի արժեքը	ընդամենը
1	2	3	4	5	6
11	Ամրան Ա-1	տն	0.25993	300000 00	77979.00
12	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-500C -10մ	տն	0 01333	300000.00	3999.00
13	Ամրան Ա-500c -22 մ	տն	0 05583	300000 00	16749.00
14	Ամրան Ա-500c -20մ	տն	0.31841	300000.00	95523.00
15	Ամրան Ա-500c -18մ	տն	0 0488	300000.00	14640.00
16	Ամրան Ա-500c -16մ	տն	0.12939	300000.00	38817.00
17	Ամրան Ա-500c -14մ	տն	0.02175	300000.00	6525.00
18	Թերթավոր պողպատ մ տափօղակ	տն	0 00928	600000.00	5568.00
19	Մետաղական ցանցի տեղադրում	տն	0.03949	300000.00	11847.00
20	Մետաղական ցանց Bp d=4 մ 10*5 սմ/արժեք/ Շ-2 - 3 հատ	մ ²	12.20	3000.00	36600.00
1	Բնահողի տոփանում խճուղ 20-40 մ	100մ ²	0.3096	450000.00	139320.00
2	Խճի նախաշերտի կառուցում 100մ 20-40 մ	մ ³	3.096	8400.00	26006.40
3	Բետոնե նախաշերտ Վ - 7.5 բետոնից 100 մ	մ ³	3 096	35000.00	108360.00
4	Միաձուլյ ե/բ հիմնային հեծանների կառուցում Բ-25 բետոնից	մ ³	12.08	70000.00	845600.00
5	Ամրան Ա-1/Ռուսաստան/	տն	0.6595	300000.00	197850.00
6	Ամրան Ա-500c -22 մ	տն	1.07987	300000.00	323961.00
7	Թերթավոր պողպատ	տն	0 01299	600000.00	7794.00
8	Ամրան Ա-500c -16մ	տն	0.20983	300000.00	62949.00
9	Ամրան Ա-500c -14մ	տն	0.03552	300000.00	10656.00
10	Միաձուլյ ե/բ հեծանների կառուցում Բ-25 բետոնից	մ ³	8.06	70000.00	564200.00
11	Ամրան Ա-1	տն	0.36092	300000.00	108276.00
12	Ամրան Ա-500c -22 մ	տն	0.93328	300000.00	279984.00
13	Ամրան Ա-500c -20մ	տն	0.20641	300000 00	61923.00
14	Ամրան Ա-500c -18մ	տն	0.10311	300000.00	30933.00
15	Ամրան Ա-500c -16մ	տն	0.25879	300000.00	77637.00
16	Ամրան Ա-500c -12մ	տն	0.07247	300000.00	21741.00
17	Թերթավոր պողպատ մ տափօղակ	տն	0 01596	600000.00	9576 00
18	Մետաղական ցանցի տեղադրում	տն	0.04705	300000.00	14115.00
19	Մետաղական ցանց Bp d=4 մ 10*5 սմ/արժեք/ Շ-3 - 2 հատ	մ ²	4.88	3000.00	14640.00
1	Բնահողի տոփանում խճուղ 20-40 մ	100մ ²	0.3758	45000.00	16911.00
2	Խճի նախաշերտի կառուցում 100մ 20-40 մ	մ ³	3.758	84000.00	315672.00
3	Բետոնե նախաշերտ Վ - 7.5 բետոնից 100 մ	մ ³	3.758	35000.00	131530.00
4	Միաձուլյ ե/բ հիմնային հեծանների կառուցում Բ-25 բետոնից	մ ³	14.64	70000 00	1024800.00
5	Ամրան Ա-1/Ռուսաստան/	տն	0.7048	300000.00	211440.00
6	Ամրան Ա-500c -22 մ	տն	1.25378	300000.00	376134.00
7	Թերթավոր պողպատ	տն	0.00866	600000.00	5196.00
8	Ամրան Ա-500c -16մ	տն	0.28225	300000.00	84675.00
9	Ամրան Ա-500c -14մ	տն	0.02224	300000.00	6672.00
10	Միաձուլյ ե/բ հեծանների կառուցում Բ-25 բետոնից	մ ³	11.72	70000.00	820400.00
11	Ամրան Ա-1	տն	0.34508	300000.00	103524.00
12	Ամրան Ա-500c -22 մ	տն	1.25378	300000.00	376134.00
13	Ամրան Ա-500c -12մ	տն	0.08811	300000.00	26433.00
14	Թերթավոր պողպատ մ տափօղակ	տն	0.00813	600000.00	4878.00
15	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-500C -10մ	տն	0.02376	300000.00	7128.00
16	Մետաղական ցանցի տեղադրում	տն	0.08637	300000.00	25911.00
17	Մետաղական ցանց Bp d=4 մ 10*5 սմ/արժեք/ Շ-3 -1 - 1 հատ	մ ²	3.36	3000.00	10080.00
1	Բնահողի տոփանում խճուղ 20-40 մ	100մ ²	0.1879	45000 00	8455.50
2	Խճի նախաշերտի կառուցում 100մ 20-40 մ	մ ³	1.879	84000.00	157836.00
3	Բետոնե նախաշերտ Վ - 7.5 բետոնից 100 մ	մ ³	1.879	35000.00	65765.00
4	Միաձուլյ ե/բ հիմնային հեծանների կառուցում Բ-25 բետոնից	մ ³	7.32	70000 00	512400.00
